

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը (ՀՊՏՀ) 2019/2020 ուսումնական տարվա համար հայտարարում է բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման ընդունելություն հետևյալ մասնագիտությունների գծով.

h/h	Մասնագիտության ծածկագիրը	Մասնագիտության անվանումը	Բուհի կողմից ուսման վարձի մասնակի գեղջիկիրառմամբ, առանց պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքի /վճարովի/	Այդ թվում՝ ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված ղիմորդների համար նախատեսված տեղերի թիվը	Ուսման վարձը /ՀՀ դրամ/	Ընդունելության քննությունները /Մրցութային/		
						Մ(գ)	Հլ (գ)	Օտլ(գ)
1	031101. 01. 6	Տնտեսագիտություն	100	10	450.000	Մ(գ)	Հլ (գ)	Օտլ(գ)
2	041101. 01.6	Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)	110	11	450.000	Մ(գ)	Հլ (գ)	Օտլ(գ)
3	041201. 01. 6	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	120	12	450.000	Մ(գ)	Հլ (գ)	Օտլ(գ)
4	041301. 01. 6	Կառավարում (ըստ ոլորտի)	110	11	450.000	Մ(գ)	Հլ (գ)	Օտլ(գ)
5	041401. 01. 6	Շուկայագիտություն (մարքեթինգ) (ըստ ոլորտի)	50	5	400.000	Մ(գ)	Հլ (գ)	Օտլ(գ)
6	052201.01.6	Բնապահպանություն և բնօգտագործում	50	5	350.000	Մ(գ)	Հլ (գ)	Օտլ(գ)
7	056201. 01. 6	Վիճակագրություն	30	3	350.000	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)
8	056802.01.6	Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա	50	5	350.000	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)
9	061104.01.6	Տեղեկատվական համակարգեր	50	5	350.000	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)
10	101501.01.6	Զբոսաշրջություն	50	5	350.000	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)
11	101801.01.6	Մերվիս	50	5	350.000	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)
Ընդամենը			770	77				

ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղ

h/h	Մասնագիտության ծածկագիրը	Մասնագիտության անվանումը	Բուհի կողմից ուսման վարձի մասնակի գեղջիկ իրառամբ, առանց պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքի /վճարովի/	Այդ թվում՝ ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված դիմորդների համար	Ուսման վարձը /ՀՀ դրամ/	Ընդունելության քննությունները (մրցութային)		
						Մ(գ)	Հլ (գ)	Օտլ(գ)
1	041101.01.6	Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)	20	2	380.000	Մ(գ)	Հլ (գ)	Օտլ(գ)
2	041201.01.6	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	20	2	380.000	Մ(գ)	Հլ (գ)	Օտլ(գ)
3	041301.01.6	Կառավարում (ըստ ոլորտի)	20	2	380.000	Մ(գ)	Հլ (գ)	Օտլ(գ)
Ընդամենը			60	6				

ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղ

h/h	Մասնագիտության ծածկագիրը	Մասնագիտության անվանումը	Բուհի կողմից ուսման վարձի մասնակի գեղջիկ իրառամբ, առանց պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքի /վճարովի	Այդ թվում՝ ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված դիմորդների համար	Ուսման վարձը /ՀՀ դրամ/	Ընդունելության քննությունները (մրցութային)		
						Մ(գ)	Հլ (գ)	Օտլ(գ)
1	041201.01.6	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	20	2	300.000	Մ(գ)	Հլ (գ)	Օտլ(գ)
2	041301.01.6	Կառավարում (ըստ ոլորտի)	20	2	300.000	Մ(գ)	Հլ (գ)	Օտլ(գ)
Ընդամենը			40	4				

Դիմորդների փաստաթղթերն ընդունվում են 2019թ. օգոստոսի 25-ից մինչև սեպտեմբերի 25-ը ներառյալ:

Դիմումի հետ ներկայացվում են.

ա/ անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական, փախստականի վկայական, ՀՀ հատուկ անձնագիր, կացության վկայական) (բնօրինակ),

բ/ միջնակարգ կրթության վկայական (ատեստատ) կամ միջին մասնագիտական և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակ),

գ/ 6 լուսանկար (3x4 սմ չափսի),

դ/ զինվորական գրքույկ կամ կցագրման վկայական,

ե/ ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են համապատասխան փաստաթղթեր (1-ին կամ 2-րդ խմբի և մինչև 18 տարեկան մանկուց հաշմանդամության, ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայող ծնողի զոհվելու, ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դառնալու, առանց ծնողական խնամքի մնացած՝ մինչև 23 տարեկան երեխա լինելու մասին),

զ/միջազգային և հանրապետական մրցույթների (օլիմպիադաներ, փառատոններ) դիպլոմներ,

է/ 2019, ինչպես նաև 2018 թվականի ,Հայոց լեզու և գրականություն, Օտար լեզու (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն) և Մաթեմատիկա առարկաների ավարտական միասնական քննությունների վկայագիր՝ դրանց առկայության դեպքում,

ը/ Փաստաթղթերի ձևակերպման վճարի (1500 դրամ) և ԲՈՒՀ-ում հանձնվող քննությունների համար նախատեսված վճարի (յուրաքանչյուր քննության համար 1500-ական դրամ) անդորագիր (վճարումները կատարվում են տեղում):

Դիմորդները քննություն են հանձնում <<Մաթեմատիկա>>, <<Հայոց լեզու և հայ գրականություն>> և <<Օտար լեզու>> (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն) առարկաներից: Եթե դիմորդը մասնակցել է 2018 կամ 2019 թվականների միասնական քննություններին և ստացել է դրական միավորներ (7.5 և բարձր միավոր), ապա մրցույթին կարող է մասնակցել այդ միավորներով: Դիմորդներն իրավունք ունեն, պահպանելով միասնական քննությունների գնահատականները, հանձնել այդ առարկաների քննությունները և մրցույթին մասնակցել տվյալ առարկայի առավելագույն միավորով:

2018թ. և 2019թ. Հայոց լեզու և գրականություն, Օտար լեզու (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն) և Մաթեմատիկա առարկաներից միասնական քննություն չհանձնած կամ վերահանձնել ցանկացող դիմորդները քննություն են

հանձնում Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում՝ այդ առարկաների միասնական քննություններին ներկայացվող պահանջներին համապատասխան:

Քննություններն անց են կացվելու 2019 թվականի սեպտեմբերի 28-ից մինչև հոկտեմբերի 20-ը:

Հեռակա ուսուցման բակալավրիատում ուսման տևողությունը հինգ տարի է:

Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ ՀՊՏՀ ընդունող հանձնաժողովից, հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 128, հեռ. (010) 59-34-73:

Դիմորդների հայտագրումը կատարվում է ՀՊՏՀ ընդունող հանձնաժողովում (ֆինանսական ֆակուլտետի 1-ին հարկ), որն աշխատում է բոլոր օրերին՝ ներառյալ տոն և հանգստյան օրերը:

Հասցեներ՝ ՀՊՏՀ, Երևան, Նալբանդյան 128, հեռ՝ (+374 10) 593-473,

Ք. Գյումրի, Վ. Սարգսյան 32, հեռ. (+374 312) 2-54-10,

Ք. Եղեգնաձոր, Վայքի փ. 4, հեռ. (+374 281) 2-54-10: